Տ. ՄԻՔԱՅԵԼ ՔԱՀԱՆԱ ՇԱՂՈՅԱՆ

(ավագանի անունը՝ Արսեն)

Ծնվել է 1977 թ. մարտի 19-ին Էջմիածին քաղաքում:

1984-1994 թթ. սովորել է տեղի Մաքսիմ Գորկու անվան № 5 միջնակարգ դպրոցում:

1984-1989 թթ. միաժամանակ հաճախել է տեղի Եղիշե Թադևոսյանի անվան նկարչական դպրոց:

1994-2000 թթ. սովորել և ավարտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2000 թ. հուլիսի 16-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000-2001 թթ. ծառայել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գանձապետը՝ իբրև հսկիչ-բացատրող:

2001 թ. նոյեմբերի 6-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Կաթոլիկ քարոզչությունը Հայաստանում ԺԷ դարում» թեմայով և արժանացել «բավարար» գնահատականի:

2001 թ. նոյեմբերի 11-ին, ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի, ձեռնադրվել է քահանա: